<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *«ԳՀԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ-1»*

ք. Երևան << >> << >> 2019 թ.

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ-ը ի դեմս Արմեն Աբգարի Մուրադյանի, որը գործում է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Աշոտ Մանուկյանի, որը գործում է «Մեդտեխսերվիս» ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տաս)** օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տաս)** օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 716954(յոթ հարյուր տասնվեց հազար ինը հարյուր հիսուն չորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է **21** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	<<ՎԱՃԱՌՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>	«Մեդտեխսերվիս»ՍՊԸ
Հիմնադրամ	Հասցե՝ք.Երևան Լեռ-12
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Բանկ՝ Հայէկոնոմբանկ»ԲԲԸ
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	Հ/Հ 163008142792
հ/հ 11500166513800	Էլ.հասցե՝ medtechservice@mail.ru
ՀՎՀՀ 01503448	Հեռ.01053-36-30, 53-36-50
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	ՀՎՀՀ՝02205001
	Տնօրեն՝Ա.Մանուկյան
Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2019.05.07 15:27:41 AMST	Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084 Date: 2019.05.06 15:45:35 GMT+04:00
_____	----------
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը**	արտադրողի անվանումը և ծագման երկիրը**	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
2	33141211	Մատրիցաներ թիթեղանման	ՊՊ «ЛАТУС» УКРАИНА	Պոլիեթիլենային կաղապար, թափանցիկ :ֆորմատ՝հատ:	հատ	8	16000	2000	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	2000	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
13	33141194	Բուժիչ տակդիր Кальцевит	ООО «ТД ВЛАДМИВА» РФ	Կալցի հիդրոքսիդային մածուկ, քիմիական կարծրացման ,բուժիչ տակդիր 7 գրամ տարողությամբ: ֆորմատ՝հատ:	հատ	1200	12000	10	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան	10	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման

				Հանձնելու պահին պիտանիության ժամկետը կլինի 2/3:					Կորյունի 2 հասցեով		օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
17	33141194	Ցինկի օքսիդ	ООО «ТД ВЛАДМИВА» РФ	Ցինկի օքսիդի փոշի է ,որը կիրառվում է արմատախողովակի լցավորման համար:Տարայի պարունակությունը ոչ պակաս քան 80 գրամ փոշի: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 2/3-ի առկայություն: Ֆորմատ՝հատ:	հատ	1350	20250	15	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	15	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
19	33141212	Ժամանակավոր պլոմբանյութ	ООО «ТД ВЛАДМИВА» РФ	Հատուկ պոլիմերային հիմքի վրա ցինկ-սուլֆատային ցեմենտ է,որը օգտագործում են ատամի խոռոչը ժամանակավոր փակելու համար:Կարծրանում է 2-3 ժամում:Տարան պարունակում է 50 գրամ նյութ: Հանձնման պահին պիտանելիության ժամկետը կլինի 2/3: Ֆորմատ՝հատ:	հատ	790	3950	5	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	5	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:

20	33141212	Ռետրակցիոն թել Re-Cord N2	ООО «ТД ВЛАДМИВА» РФ	Ռետրակցիոն թել N2,թելի երկարությունը՝ 1,5մետր: Ֆորմատ՝հատ:	հատ	1500	22500	15	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	15	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
21	33141212	Սիլիկոն դրոշմանյութ 2 շերտ և կատալիզատոր լրակազմ Ormamax և Ormactivator	MAJOR PRODOTTI DENTARI S.p.A. Italy	C-սիլիկոն դրոշմանյութ 2 շերտ ,150մլ՝ medium ծորունության, կատալիզատոր՝ 60 մլ: Հանձնման պահին պիտանելիության ժամկետը կլինի՝ 2/3: Ֆորմատ՝ լրակազմ:	հատ	6900	207000	30	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	30	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
22	33141211	Թրթռասեղան լաբորատոր	ROLLMED CO. LTD CHINA	Վիբրոսեղան նախատեսված գիպսե մոդելներով աշխատելու համար: ֆորմատ՝ հատ:	հատ	18500	18500	1	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	1	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային

											օրվա ընթացքում:
23	33131110	Էլեկտրամածկիչ թվային երկուղի	ROLLMED CO. LTD CHINA	Երկու ելքով էլեկտրամածկիչ, նախատեսված է միաժամանակ երկու անձի օգտվելու համար մեկ էլեկրտրաշպատելից : Նախատեսված է մոմով աշխատանքների համար: ֆորմատ՝ հատ:	հատ	30000	90000	3	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	3	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
27	33141211	Ֆրեզներ տեխնիկական	ООО 'КМИЗ ЭКСПОРТ' РФ	Կոնաձև պլաստմասայի հղկման համար, կարմիր գծով, որը ցույց է տալիս հղկելիությունը, չափսը- մեծ: Պատրաստված է մետաղից: Ֆորմատ՝հատ:	հատ	1800	43200	24	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	24	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
28	33141212	Մեկուսիչ լաք Изальгин	ООО «ТД ВЛАДМИВА »РФ	Պլաստմասան գիպսե մոդելից անջատող նյութ-լաք:Տարայի պարունակությունը՝ 0,5 լ: Ֆորմատ՝հատ: Հանձնման պահին պիտանելիության ժամկետը կլինի 2/3:	հատ	2898	8694	3	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	3	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25

											օրացույցային օրվա ընթացքում:
29	33141212	Ալգինատային չափսանյութ	MAJOR PRODOTTI DENTARI S.p.A. Italy	Ալգինատային դրոշմանյութ /ալգինատ սովորական/, փոշի դրոշմ ստանալու համար, հակաալերգիկ: Պարկի պարունակությունը՝ 455գ: Ֆորմատ՝ հատ: Հանձնելու պահին պիտանիության ժամկետը 2/3:	հատ	1896	85320	45	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	45	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
34	33141211	Դրոշմ ստանալու գդալ	MELBUR INDUSTRIES CO., /Dochem/ CHINA	Պլաստմասե ծակոտկեն դրոշմագդալ: Չափս-L: Նախատեսված է վերին և ստորին ծնոտի համար: Ֆորմատ՝զույգ:	հատ	295	3540	12	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	12	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
35	33141157	Նշտար 10	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,մետաղական, ձևը՝ փորիկավոր: Չափսը-10:Կիրառում են նշտարաբռնիչի հետ: ֆորմատ՝հատ:	հատ	19.5	1950	100	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան	100	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից

									Կորյունի 2 հասցեով		հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
36	33141157	Նշտար 11	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,մետաղական, ձևը՝ փորիկավոր: Չափսը՝ 11:Կիրառում են նշտարաբռնիչի հետ: ֆորմատ՝հատ:	հատ	19.5	1950	100	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	100	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
37	33141157	Նշտար 12	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,մետաղական, ձևը՝ փորիկավոր: Չափսը՝ 12:Կիրառում են նշտարաբռնիչի հետ: ֆորմատ՝հատ:	հատ	19.5	1950	100	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	100	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
38	33141157	Նշտար 15	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,մետաղական, ձևը՝փորիկավոր: Չափսը՝15:Կիրառում են նշտարաբռնիչի հետ:Ֆորմատէ հատ:	հատ	19.5	1950	100	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան	100	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման

									Կորյունի 2 հասցեով		օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
39	33141157	Նշտար 10	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,մետաղական, ձևը՝մանգաղանման: Չափսը՝10:Կիրառում են նշտարաբռնիչի հետ:ֆորմատ՝ հատ:	հատ	19.5	1950	100	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	100	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
40	33141157	Նշտար 11	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,մետաղական, ձևը՝ մանգաղանման: Չափսը՝11:Կիրառում են նշտարաբռնիչի հետ:ֆորմատ՝ հատ:	հատ	19.5	1950	100	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	100	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
41	33141157	Նշտար 12	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,մետաղական, ձևը՝ մանգաղանման: Չափսը՝12:Կիրառում են նշտարաբռնիչի հետ:ֆորմատ՝ հատ:	հատ	19.5	1950	100	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով,	100	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի

									ք.Երևան Կորյունի 2 հասցեով		կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
42	33141157	Նշտար 15	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,մետաղական, ձևը՝ մանգաղանման: Չափսը՝15:Կիրառում են նշտարաբռնիչի հետ:ֆորմատ՝ հատ:	հատ	19.5	1950	100	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	100	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
43	33141211	Նշտարաբռնիչ մեծ	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է ,որի վրա ֆիքսվում է նշտարը, մետաղական է: Չափսը-մեծ: ֆորմատ՝հատ:	հատ	1500	36000	24	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	24	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
44	33141211	Նշտարաբռնիչ փոքր	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական գործիք է, որի վրա ֆիքսվում է նշտարը: Մետաղական է: Չափսը-փոքր: ֆորմատ՝հատ:	հատ	800	19200	24	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված	24	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին,

									հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով		պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
48	33141121	Ասեղներ թելով ծակող 4.0	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական ասեղ թելով, ծակող , չափսը -4.0 , թելը չներծծվող,մոնոֆիլա մենտ մետաքս: ֆորմատ՝ հատ	հատ	190	27360	144	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	144	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
49	33141121	Ասեղներ թելով ծակող 5.0	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական ասեղ թելով, ծակող , չափսը -5.0 թելը չներծծվող,մոնոֆիլա մենտ մետաքս: ֆորմատ՝ հատ	հատ	190	27360	144	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	144	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
50	33141121	Ասեղներ թելով ծակող 6.0	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական ասեղ թելով, ծակող , չափսը -6.0 ,թելը չներծծվող,մոնոֆիլա	հատ	220	31680	144	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝	144	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019

				մենտ մետաքս: ֆորմատ՝ հատ					գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով		թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:
51	33141121	Ասեղներ թելով 5.0 պոլիֆիլամենտ	ROLLMED CO. LTD CHINA	Վիրաբուժական ասեղ թելով, ծակող , չափսը -5.0 թելը չներծծվող,պոլիֆիլամենտ, պոլիպրոպիլեն : ֆորմատ՝ հատ	հատ	200	28800	144	Մատակարարումն իրականացվում է վաճառողի կողմից՝ գնորդի նշված հասցեով, ք.Երևան Կորյունի 2 հասցեով	144	Ապրանքների մատակարարումը իրականացվելու է 2019 թվականին, պայմանագրի կնքման օրվանից հաշված 25 օրացույցային օրվա ընթացքում:

Պարտադիր պայման է՝ ապրանքի չօգտագործված լինելը:

Այն չափաբաժինները, որոնց համար կիրառելի է պիտանելիության ժամկետ, պետք է ունենան ամբողջ պիտանելիության ժամկետի 50%

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.05.07 15:28:04 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
«Մեդտեխսերվիս»ՍՊԸ
Հասցե՝ք.Երևան Լեռ-12
Բանկ՝ Հայէկոնոմբանկ»ԲԲԸ
Հ/Հ 163008142792
Էլ.հասցե՝ medtechservice@mail.ru
Հեռ.01053-36-30, 53-36-50
ՀՎՀՀ՝02205001
Տնօրեն՝Ա.Մանուկյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2019.05.06 15:45:52 GMT+04:00

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	33141211	Մատրիցաներ թիթեղանման	0	0	0	0	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000	16000
13	33141194	Բուժիչ տակդիր	0	0	0	0	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
17	33141194	Ցինկի օքսիդ	0	0	0	0	20250	20250	20250	20250	20250	20250	20250	20250	20250
19	33141212	Ժամանակավոր պլոմբանյութ	0	0	0	0	3950	3950	3950	3950	3950	3950	3950	3950	3950
20	33141212	Ռետրակցիոն թել	0	0	0	0	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500

21	33141212	Սիլիկոն դրոշմանյութ 2 շերտ և կատալիզատոր լրակազմ	0	0	0	0	207000	207000	207000	207000	207000	207000	207000	207000	207000
22	33141211	Թրթռասեղան լաբորատոր	0	0	0	0	18500	18500	18500	18500	18500	18500	18500	18500	18500
23	33131110	Էլեկտրամածկիչ թվային երկուղի	0	0	0	0	90000	90000	90000	90000	90000	90000	90000	90000	90000
27	33141211	Ֆրեզներ տեխնիկական	0	0	0	0	43200	43200	43200	43200	43200	43200	43200	43200	43200
28	33141212	Մեկուսիչ լաք	0	0	0	0	8694	8694	8694	8694	8694	8694	8694	8694	8694
29	33141212	Ալգինատային չափսանյութ	0	0	0	0	85320	85320	85320	85320	85320	85320	85320	85320	85320
34	33141211	Դրոշմ ստանալու գդալ	0	0	0	0	3540	3540	3540	3540	3540	3540	3540	3540	3540
35	33141157	Նշտար 10	0	0	0	0	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950

36	33141157	Նշտար 11	0	0	0	0	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950
37	33141157	Նշտար 12	0	0	0	0	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950
38	33141157	Նշտար 15	0	0	0	0	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950
39	33141157	Նշտար 10	0	0	0	0	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950
40	33141157	Նշտար 11	0	0	0	0	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950
41	33141157	Նշտար 12	0	0	0	0	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950
42	33141157	Նշտար 15	0	0	0	0	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950	1950
43	33141211	Նշտարաբռնիչ մեծ	0	0	0	0	36000	36000	36000	36000	36000	36000	36000	36000	36000

44	33141211	Նշտարաբռնիչ փոքր	0	0	0	0	19200	19200	19200	19200	19200	19200	19200	19200	19200
48	33141121	Ասեղներ թելով ծակող 4.0	0	0	0	0	27360	27360	27360	27360	27360	27360	27360	27360	27360
49	33141121	Ասեղներ թելով ծակող 5.0	0	0	0	0	27360	27360	27360	27360	27360	27360	27360	27360	27360
50	33141121	Ասեղներ թելով ծակող 6.0	0	0	0	0	31680	31680	31680	31680	31680	31680	31680	31680	31680
51	33141121	Ասեղներ թելով 5.0 պոլիֆիլամենտ	0	0	0	0	28800	28800	28800	28800	28800	28800	28800	28800	28800

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով, վճարումը կիրականացվի ըստ փաստացի մատակարարված քանակների:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Միսիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2019.05.07 15:28:18 AMST

<<ՎԱՃԱՌՈՂ>>
«Մեդտեխսերվիս»ՍՊԸ
Հասցե՝ք.Երևան Լեռ-12
Բանկ՝ Հայէկոնոմբանկ»ԲԲԸ
Հ/Հ 163008142792
Էլ.հասցե՝ medtechservice@mail.ru
Հեռ.01053-36-30, 53-36-50
ՀՎՀՀ՝02205001
Տնօրեն՝Ա.Մանուկյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MANUKYAN ASHOT 1609520084
Date: 2019.05.06 15:46:02 GMT+04:00

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/16-11-ԵՊԲՀ-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն